№ 139 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 **1894** ՀԻՆԳՇԱԲԹԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 № 139

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1895 ԹԻԱԿԱՆԻՆ

23-ՐԴ ՏԱՐԻ **„ՄՇԱԿ“** 23-ՐԴ ՏԱՐԻ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոգրամայով և նոյն ուղղութեամբ։ Մենք ստանում ենք սեփական ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

«ՄՇԱԿԻ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տասն և մէկ և տասն ամսվանը՝ 9 ռ., ինն և ութ ամսվանը՝ 8 ռ., եօթ ամսվանը՝ 7 ռ., վեց ամսվանը 6 ռ., հինգ ամսվանը՝ 5 ռ., չորս ամսվանը՝ 4 ռ., երեք ամսվանը՝ 3 ռ., երկու ամսվանը 2 ռ., մի ամսվանը՝ 1 ռուբլի։

«ՄՇԱԿԻՆ» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բաղարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն)։

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցէով. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK».

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մամուլը և Թիւրքայ հայերը. Անվերջ հերքումներ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մատենագրութիւն. Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ռուսաստանի և Անգլիայի համաձայնութիւնը. Մակեդոնիայի ինքնավարութիւնը. Նամակ Թիւրքիայից. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ԲՕՐՍԱ. — ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակներ Եւրոպայից։

ՄԱՄՈՒԼԸ ԵՒ ԹԻԻՐՔԱՅ ՀԱՅԵՐԸ

Լօնդօնի „Times“ լրագիրը մի առաջնորդող յօդուածում ասում է. „Անմբտութիւն կը լիներ սառնասրտութեամբ վերաբերվել դէպի այն գազանութիւնները, որ կատարվում են Թիւրքերի ձեռքով Հայաստանում։ Անգլիան պէտք է խառնվի հայոց գործերում, յենվելով Ռուսաստանի բարեկամութեան վրա։“ Լրագիրը խորհուրդ է տալիս բոլոր եւրոպական պետութիւններին կ. Պոլսում բողոք յայտնել Թիւրքայ անգթութիւնների դէմ և նոյն իսկ սպառնալ Թիւրքիային, որ խիստ միջոցներ ձեռք կառնվեն։

Մոսկվայի „Московскія Вѣдомости“ լրագիրը տպագրել է մի հեռագիր Լօնդօնից, որը հաստատում է այն անգթութիւնները, որոնք տեղի են ունեցել Թիւրքայ Հայաստանում։ Այդ հեռագրի մէջ բերված է անգլիական մի քանի լրագիրների կարծիքը, որ սուլթանը մեծ սխալ է արել շքանշան տալով Զաքի-փաշային, որը Սասունի արշաւող զօրքի հրամանատարն էր։ Անկասկած մեծ սխալ է.—մի կողմից Թիւրքայ կառավարութիւնը խոստումներ է տալիս, որ խիստ քննութիւն կը լինի, և արիւնարբու պաշտօնեաները կը պատժվեն, իսկ միւս կողմից շքանշան է տալիս Զաքի-փաշայի նման մարդուն, որի հրամանով հազարաւոր անմեղներ մորթվեցին և սրի ճարակ դարձան Սասունի լեռներում։

Լօնդօնի „Daily News“ լրագիրը հաստատելով Սասունի մէջ տեղի ունեցած կոտորածը և անգթութիւնները, զոլաբանում է այն վճռական դիրքը, որ բռնել է կ. Պոլսի անգլիական դեսպան Կէրրի դէպի Թիւրքայ կառավարութիւնը, ստիպելով Բ. Դրան, խոստովանել կատարված անգթութիւնները և քննութիւն նշանակել այդ առիթով։

Լօնդօնի „Times“ լրագիրը հաղորդում է, որ Լօնդօնում տեղի ունեցաւ մի միտինգ, ուր վճռվել է դիմել Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածը։ Միտինգի մէջ այն կարծիքը յայտնվեց, որ ոչինչ նշանակութիւն չունի սուլթանի կողմից ուղարկած մասնաժողովը, քանի որ այդ բոլոր անգթութիւնները և սպանութիւնները Թիւրքայ կառավարութեան գիտութեամբ են տեղի ունեցել։

Լօնդօնից հեռագրում են „Новости“ լրագրին, որ սուլթանը թոյլ տուեց, որ մի օտարերկրացի մասնակցի քննիչ-յանձնաժողովի մէջ։ Ով է այդ օտարերկրացին,—յայտնի չէ։ Յայտնի է միայն, որ Թիւրքայ կառավարութիւնը թոյլ չը տուեց, որ կամ եւրոպական դեսպանութիւնների ներկայացուցիչները գնան, և կամ եւրոպական հիւպատոսներից մի մասնաժողով կազմվի՝ դէպքերը քննելու համար։

Լօնդօնի „Standard“ լրագրի Վիէննայի թղթակիցը գրում է. „Վիէննայում ուշադրութիւն դարձրին այն բանի վրա, որ ռուսաց և անգլիական մամուլի յայտնած հայեացքները՝ հայոց հարցի մասին՝ միմեանց նման են“։

Լօնդօնից հեռագրում են հետեւեալը. „Ամէնքից հաղորդում են „Daily News“ լրագրին, որ ճիշդ են Թիւրքերի ձեռքով կատարված անգթութիւնները, քաղելով նոյն իսկ այն հայերից, որոնք փախչելով են ազատվել Թիւրք զօրքերի հալածանքից։ Իրանք հայերը խոստովանում են, որ Դալվորգին գիւղի բնակիչները կոտորեցին Թիւրքայ զօրքերի մի վաշտ. բայց յետոյ Թիւրքերը համարեա թէ բնաջինջ արեցին բոլոր բնակիչներին“։

Լօնդօնից հեռագրում են „Новое Время“ լրագրին. „Անգլո-հայկական ընկերութիւնը միջամտում է անգլիական կառավարութեան առաջ, որ վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչներից կազմվի մի մշտական միջազգային յանձնաժողով, Թիւրքայ Հայաստանի տեղական կառավարութիւնը վերակազմելու համար. նոյն յանձնաժողովին պէտք է յանձնել տեղական Թիւրք իշխանութիւնների գործողութիւնների վրա հսկելը“։

ԱՆՎԵՐՋ ՀԵՐՔՈՒՄՆԵՐ.

Թիֆլիսի Թիւրքայ ընդհանուր հիւպատոսի հերքումներին վերջ չը կայ.—„Кавказъ“ լրագրի նոյեմբերի 29-ի համարում տեղական համարեա բոլոր լրագիրների դէմ տպած երկու հերքումով չը բաւականանալով, նա նոյն լրագրի երէկվայ համարում նորից երևան եկաւ մի նոր հերքումով „Մշակի“ դէմ...

Ինչպէս երևում է, օսմանեան կառավարութեան Թիֆլիսի ներկայացուցիչը յետ չէ ուզում մնալ Թիւրքայ աւելի բարձր պաշտօնեաների դեսպանների և մինիստրների օրինակից, և ցանկանում է հերքումներով, առանց փաստերի և ապացոյցների, հերքել այն բոլորը, ինչ որ ճշմարտութիւն է, ինչ որ ապացուցված է։

Թողնենք մի րօպէ հիւպատոսին և խօսենք նրանից աւելի մեծերի մասին։— Դեռ այս օրերս Պետերբուրգի, Բերլինի, Պարիզի և Լօնդօնի Թիւրքայ դեսպանները վերակազմեցին Նոյն իսկ այն հայերից, որոնք փախչելով են ազատվել Թիւրք զօրքերի հալածանքից։ Իրանք հայերը խոստովանում են, որ Դալվորգին գիւղի բնակիչները կոտորեցին Թիւրքայ զօրքերի մի վաշտ. բայց յետոյ Թիւրքերը համարեա թէ բնաջինջ արեցին բոլոր բնակիչներին“։

Լօնդօնից հեռագրում են „Новое Время“ լրագրին. „Անգլո-հայկական ընկերութիւնը միջամտում է անգլիական կառավարութեան առաջ, որ վեց մեծ պետութիւնների ներկայացուցիչներից կազմվի մի մշտական միջազգային յանձնաժողով, Թիւրքայ Հայաստանի տեղական կառավարութիւնը վերակազմելու համար. նոյն յանձնաժողովին պէտք է յանձնել տեղական Թիւրք իշխանութիւնների գործողութիւնների վրա հսկելը“։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ԵՒՐՕՊԱՑԻՑ

IV

Տիրօլից ուղևորվեցի Ցիւրիխ։

Շնորհիւ արտասահմանի և երկրի մասերի հետ միացնող երկաթուղային ցանցին, մի երկու տասնեակ տարի առաջ աննշան, քիչ բնակիչներ ունեցող այդ քաղաքը Շվեյցարիայի ամենամեծ քաղաքն է դարձել, ծաղկած արդիւնաբերութեամբ, վաճառականութեամբ, բարձրագոյն և միջնակարգ ուսումնարաններով։ Երբ քաղաքի կենտրօնն էք մտնում, բազմաթիւ ամբոխի, էլէկտրաշարժ, շոգեշարժ, ձիաքաշ կառքերի անընդհատ ընթացքը դիտում, կամ կանգնած լճից դուրս եկող գետի կամրջի վրա՝ դիտում էք տասնեակ զօրձարաններ, մեծ վաճառատներ, խանութներ՝ լի հազարու մի տեսակ վաճառելիքներով, հաղիւ թէ տարբերութիւն գտնէք Պարիզի և Վիէննայի նըման մեծ կենտրօններից։ Շվեյցարիան, յատկապէս Ցիւրիխ և Ժընէվ քաղաքները, արդիւնաբերութեան որոշ ճիւղերի մէջ այնպիսի հռչակ ունեն, որ կարողանում են մրցել աւելի մեծ, հարուստ ազգերի հետ և ոչ մի ջանք չեն խնայում այդ դիրքը պահպանելու։

Հիւրանոցում փոքր ինչ հանգստանալուց յետոյ, գնացի համալսարան՝ պրոֆէսսոր Աբելեանի և հայ ուսանողների հասցէները իմանալու։ Միայն մի ուսանողուհու հասցէ տուին, օրիորդ Մէլիք-Բէգլարեանի, որ բժշկութիւն է սովորում և մինչև յունվար կաւարտէ։ Պրոֆէսսոր Աբելեան մեծ հաճայականութեամբ առաջարկեց ինձ միւս օրը ցոյց տալ քաղաքը։

Այդ և հետեւեալ երեկոյեան տեսնվելով պրոֆէսսորի հետ, բազմաթիւ հետաքրքիր տեղեկութիւններ ստացայ նրա ժամանակվայ Ներսիսեան դպրոցի մասին, իմացայ այն պատճառները, որ ստիպել են նրան հայրենիք չը վերադառնալ և, վերջապէս, տեսայ Գրիգոր Արծրունու նկարագրած իսկական «Էվէլինայի» երկու լուսանկար պատկերները, որոնց մասին տիկին Աբելեան մի քանի բաներ պատմեց։ Պ. Աբելեան յայտնեց, որ դրաբար ոտանաւորով նկարագրել է 1865 թուականի աշակերտական խառնակութիւնը Ներսիսեան դպրոցում և ձեռագիրը գտնվում է Թելուցի Մամուլեան անունով մի պարոնի մօտ, բայց իր յետ ստանալու առիթով գրած նամակները անպատասխան են մնացել։ Նրա պատմածների և Ղազարոս Աղայեանի պատմածների մէջ մեծ նմանութիւն կայ, և եթէ նրա ձեռագիրը կորած չէ, որոշ չափով կարող է նիւթ տալ դպրոցի պատմութիւնը գրողին։

Միւս կիրակի օրը պրոֆէսսոր Աբելեանի հետ գնացինք ուշադրութեան արժանի տեղերը տեսնելու։ Պէտք է իմանալ, որ Եւրոպայի ամեն մի քաղաք, նոյն իսկ փոքր ինչ մեծ գիւղեր, ունեն այսպէս ասած «տեսնելու արժանի բաներ» (sehenswürdigkeiten), այլ և այլ ժողովածուներ, թանգարաններ, հին հետաքրքիր պատմական շինութիւններ, աւերակներ, բնութեան տեսարաններ, արձաններ, հասարակական զբօսավայրեր, պարտէզներ և այլն, և այլն, որոնք ծառայում են թէ տեղացիներին կրթելու, սովորցնելու, ազատ ժամերին հանգստութեան տեղ ծառայելու, և թէ օտարների առաջ տեղական ազգասիրութեան պարծանքն են կազմում։ Փոքրիկ քաղաքներում շատ անգամ մի քանի տեղ պատերի վրա կպցրած են լինում նրանց յիշատակութիւնները և տեսնելու ժամերը, մուտքի վճարը ձրի լինելը։ Աւելորդ է ասել, թէ սրանց նման հիմնարկութիւնները ինչ կրթական նշանակութիւն ունեն։

Եթէ մէկը մեծ քաղաքներում յաճախել է այդ տեսակ տեղեր, շատ անգամ աւելորդ է համարում փոքրիկ քաղաքները տեսնելու. կասկած չը կայ, որ դրանով նա շատ բան է կորցնում։

Ցիւրիխի հնագիտական թանգարանը ամփոփված է երեք փոքրիկ դահլիճներում, որոնք հատասար են Լուվրի մի դահլիճին. բայց այդ փոքրիկ ժողովածուն աշխարհահռչակ է և գրաւում է միշտ բազմաթիւ այցելուներ, շնորհիւ նրա նախապատմական իրերի յատկութեան և շատութեան, որի նմանը և ոչ մի տեղ չը կայ։

Այդ ժողովածուն նոր է կազմվել և միանգամայն պատահմամբ։ Մի քանի տարի առաջ, երաշտութեան պատճառով, Ալպեան լճերի ջրերը սաստիկ պակասում են. Ցիւրիխի լճի ափին ապրող գիւղացիները նկատում են ինչ որ շինութեան հետքեր չորացած տեղերում, և հետաքրքրվելով՝ գտնում են ամբողջ գիւղերի մնացորդներ, որ ամբողջ դարեր ջրի տակ ծածկված են մնացել։ Ցների շինութիւնը նման էր այն տներին, որ յայտնի են «սիւների շինութիւն» Pfahlbauten անունով և մինչև այդ ժամանակ ծանօթ են եղել հիւսիսային Իտալիայում, Պօ գետի հովիտներում։ Այդ շինութիւնների առանձնայատկութիւնը նրա մէջն է կայանում, որ շինված են ճահճային տեղերում, լճերի եզերքի երես տեղերում։ Մարդիկ այդպիսի տեղերում բնակարան շինելու համար ճահճի կամ լճի մէջ ամրացնում էին ուղղահայեաց դրութեամբ սիւներ և այդ սիւների վրա, ջրի մակերևոյթից բարձր, հաստատում էին իրանց բնակարանները։ Այդ ձևով ստացած տունը մի տեսակ ամրոց, պաշտպանութեան միջոց էր բազմաթիւ գազանների, պատահարների դէմ։ Շինութիւնների հետ միասին գտնվել են բազմաթիւ իրեր, ձեռագործներ, ուտելիքի, կերակրների, շորերի, գործուածքների, մի քանի հացահատիկների և պտուղների մնացորդներ, որոնք, բոլորը միասին առած՝ ամենակատարեալ գաղափար են տալիս այն ժամանակվայ մարդու զարգացման, կուլտուրական առաջադիմութեան մասին։ Մեր առաջ են դրած քարեայ և բրոնզեայ դարերում Շվեյցարիայի նախնական մարդու կեանքը, թէ ինչպէս էր քարից շէնքեր պատրաստում, ինչպէս էր շինում իր տունը, ապրուստի համար ինչպէս էր կռւում վայրենի կենդանիների հետ, ինչ էր շինում, գործում տանտիկինը տանը, ինչով էր զարդարում իր ականջները, ձեռքերը, կուրծքը։ Ամբողջ դարեր են անցել, ոչ մի գրաւոր յիշատակութիւն, ոչ մի ժամանակագիր ոչինչ չէ հաղորդում մեր այն նախնիքների մասին, որոնց ջանքով, բնական մտածողութեան և փորձի շնորհով այնպիսի գիւտեր են եղել, որ ընդմիշտ մարդկութեան սեփականութիւն են կազմել և նպաստել նրան նոյն գիւտերի միջոցով աւելի առաջ ընթանալ, աւելի բարեկիրթ դրութիւն հաստատել։ Մինչև այսօր էլ մուրճ կամ կացին ու թուր պատրաստողը, կնոջ համար ապրանքներ, գինեղէր շինողը նախնական մարդու հնարած ձևից տարբեր ձև չէ ընդունում։ Այժմ այդ մարդկանց ձեռագործները, հազարաւոր տարիներ մայր երկրի ծոցում անվնաս, անկորուստ մնալուց յետոյ, յարութիւն են առել և կարծէք իբրև կենդանի, խօսուն վկայ-ականատեսներ պատմում, ներկայացնում են իրանց դարը։

հերքումներ գրեցին, որ Սասունում կոտորած չէ եղել, որ Մուշի կողմերում կատարեալ խաղաղութիւն է տիրում, և այլն և այլն։

Եւ ինչ, այժմ, ինքը Թիւրքաց կառավարութիւնը, հրապարակով, պաշտօնապէս խոստովանվում է, որ ճշմարիտ է, անկարգութիւններ են եղել, կոտորած է տեղի ունեցել, ամբողջ գիւղեր և նոյն իսկ գաւառներ են աւերվել... Եւ իր այդ հրապարակական խոստովանութեանը Թիւրքաց կառավարութիւնը միայն մի բան աւելացրեց, —որ սպանողը, թալանողը, կոտորողը և կողոպտողը ոչ թէ Թիւրքերը կամ քուրդերն են,—այլ նոյն իսկ... հայերը։

Թողնենք դեսպաններին, մի րոպէ կանգ առնենք հէնց Թիֆլիսի Թիւրքաց հիւպատոսի վրա, որ անվերջ հերքումներ է գրում։ Սրանից մի քանի օր միայն առաջ այդ հիւպատոսը պաշտօնապէս յայտարարեց, թէ սուտ է „Մշակի“ մէջ և համարեա բոլոր լրագիրներում տպած այն լուրը, թէ Թիւրքաց կառավարութիւնը քննիչ-յանձնաժողով է ուղարկել Սասուն։ Մենք անմիջապէս ապացուցինք, որ Թիւրքաց բարձր կառավարութիւնը պաշտօնապէս Կ. Պոլսի բոլոր լրագիրների մէջ յայտնեց, որ Սասուն քննիչ-յանձնաժողով է ուղարկված՝ յայտնելով այդ մասին բոլոր պետութիւններին։

Դուրս է գալիս ուրեմն, որ Թիֆլիսի Թիւրքաց պարոն հիւպատոսը բարեհաճում է հերքումներ գրել իր կառավարութեան անունից, առանց իմանալու, թէ ինչ է անում այդ կառավարութիւնը, առանց տեղեկութիւն ունենալու, թէ ինչ է կատարվում ոչ թէ Թիւրքաց Հայաստանում, այլ նոյն իսկ Կ. Պոլսում։

Եւ թող չը զարմանան Թիւրքաց կառավարութեան այդ ներկայացուցիչները, եթէ վաղը ամբողջ մամուլը, ամբողջ Եւրոպան, ամբողջ հասարակաց կարծիքը, միանգամ ընդ միշտ ստիպված կասկածանքով կը վերաբերվեն դէպի Թիւրքաց կառավարութեան խօսքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Մովսէս Խորենացու պատմութիւնն այնքան կարևորութիւն է ունեցել արևելքի պատմութեամբ հետաքրքրվող բանասէրների համար, որ 150 տարվայ ընթացքում ոչ միայն բազմաթիւ թարգմանութիւններ են եղել նրանից եւրոպական զլխաւոր լեզուներով՝ այլ և նուիրվել են նրա քննադատութեան աւելի բազմաթիւ գրուածքներ, որոնց ծաւալը տասնապատիկ և աւելի գերազանցում է քերթողահօր պատմութիւնից։

Պ. Գր. Խալաթեանց մի գովելի գործ է կատարել՝ այս ընդարձակ քննադատական մատենագրութեան համառօտ պատմութիւնը տալով մի առանձին յօդուածով, որ կրում է հետևեալ վերնագիրը «Начало критическаго изученія Исторіи Арменіи Моисея Хоренскаго» (տպված «Журнал. Министер. Народ. Просвѣщ., հոկտեմբեր 1894)։ Մենք տեսնում ենք այստեղ գրեթէ բոլոր անուանի հայագէտների ծանօթ անունները, որոնք կարծես երկու բանակի բաժանված՝ գիտութեան զէնքերով կռուում են միմեանց դէմ. մի կողմն անխնայ յարձակվում է Խորենացու պատմութեան վրա, ճգնում է սուտ հանել նրա աղբիւրները, կասկածելի դարձնել նրա արժանահաւատութիւնը, հինգերորդ դարից ներքև, մինչև եօթերորդ կամ ութերորդ դար իջեցնել նրա գրութեան ժամանակը։ Միւս կողմը պաշտպանում է նրան յիշեալ յարձակման կէտերի դէմ, տեղ տեղ զիջանելով ապացուցված ճշմարտութեան։

Առաջին բանակին պատկանող գլխաւոր բանասէրներն եղել են, ժամանակագրական կարգով, Լա-Կրոզ, Կատրմէր, Պատկանեան, Գուդշմիտ, Գարագաշեան, Էմին, Կարրիէր. երկրորդ բանակին պատկանել են Վիստոն եղբայրները, Զամչեան, Սէն-Մարտէն, Ինճիճեան, Դիւլորիէ, Էմին, Լանգլուա, Բ. Սարգիսեան և այլն։

Վերոյիշեալ յօդուածի բանասէր հեղինակը թեքվում է դէպի Կարրիէրի կարծիքը, որ Խորենացու պատմութիւնը գրված է համարում եօթներորդ-ութերորդ դարերում, մինչդեռ Ն. Մարրը, ինչպէս անցեալ անգամ յիշեցինք («Մշակ» № 132) խիստ կասկածով է վերաբերվում ֆրանսիացի բանասէրի եզրակացութեան։ Սակայն պ. Խալաթեանցն ևս յօդուածի վերջում յայտնում է, թէ Խորենացու պատմութեան արժանահաւատութեան մասին վճռական դատաստան անել չէ կարելի՝ մինչև չը հետազօտվեն նրա բոլոր աղբիւրները. պրոֆէսօր Կարրիէր իր եզրակացութիւնները հիմնում է միայն յոյն աղբիւրների վրա. այժմ պէտք է հետազօտել հայ աղբիւրները, որոնց և պատկանում է վերջին խօսքը Խորենացու մասին։

Միանգամայն ճշմարիտ է յօդուածագրի այս եզրակացութիւնը, ինչպէս և Մարրի կարծիքը, որ նոյնպէս կարևոր է համարում բազմակողմանի ուսումնասիրութիւն Խորենացու աղբիւրներին և հանգամանքներին, մասնաւորապէս ասորական (ասորերէն կամ ասորերէնից թարգմանված) աղբիւրներին։ Առանց այսպիսի նախընթաց բազմակողմանի ուսումնասիրութեան՝ Խորենացու կնճռոտ խնդիրը չէ կարող լուծվել. և եթէ այսօր Կարրիէրի հետ Խորենացուն եօթերորդ-ութերորդ դարի պատմագիր ընդունենք՝ իսկոյն բազմաթիւ զօրաւոր առարկութիւններ կելնեն մեր դէմ և կը հաստատեն, որ նա եօթերորդ-ութերորդ դարի պատմագիր չէ, այլ հինգերորդ դարի։

Պ. Խալաթեանցի յօդուածը հետաքրքրական է և նրանով. որ ցոյց է տալիս, թէ յոյն մատենագրութեան այն կտորները, որոնց հետ Կարրիէր համեմատել է Խորենացու համապատասխան տեղերը՝ վաղուց արդէն նկատված են եղել ուրիշներից, մանաւանդ Վիստոն եղբայրներից, թէպէտ սրանք օգտվել են նրանցից ոչ թէ Խորենացու արժանահաւատութիւնը հերքելու, այլ ապացուցանելու համար։

Պ. Խալաթեանց լաւ ծանօթ է խնդրի մատենագրութեան, անմիջական աղբիւրներից. ուստի անհասկանալի է մնում՝ որ նա չէ յիշում Կարրիէրի Moïse de Khoren et les généalogies patriarcales ուսումնասիրութիւնը, որտեղ, որչափ մենք գիտենք՝ առաջին անգամ փորձ է լինում ապացուցանելու, թէ Մար-Աբաս երբէք գոյութիւն չէ ունեցել, այլ Խորենացու հնարածն է։

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Նոյեմբերի 23-ին

Ղուբայի քաղաքային բժիշկ Յէնտնէր նորերումս դիմել է Ղուբայի գաւառապետ Եաղիկովին, որպէս զի այս վերջինը միջնորդէ Բագուի նահանգապետի առաջ՝ Ղուբա քաղաքում մի հիւանդանոց բանալու համար, որի բացակայութիւնը խիստ զգալի է։

Բժիշկ Յէնտնէր հետևեալ պայմաններն է առաջարկում.—քաղաքային դրամագլխից միանուագ 700 ր. յանձնել բժշկին և նրա անմիջական կարգադրութեան տակ դնել. այդ գումարը գործադրվելու է ընակարանի և դրա հետ կապված մի քանի պիտոյքների համար։ Ապագայ հիւանդանոցը պէտք է զետեղէ իր մէջ 10 մահճակալներ հիւանդների համար, որոնց խնամելու է ինքը Յէնտնէր, ուրիշ բժիշկ ընկերների հետ միասին։ Ապա առաջարկում է, որ քաղաքային գումարից նաև ամեն ամիս վճարվի 100 ր. փող, որը գործադրվելու է 10 հիւանդների ճաշի և առհասարակ ապրելու համար։ Իսկ ինչ վերաբերում է ստացած արդիւնքին՝ հիւանդանոցի (աղքատ դասակարգից ոչինչ չէ վերցնվում) այդ օգուտը պիտի յատկացնվի Ղուբա քաղաքին։

Թէ հիւանդանոցի գոյութիւնը որքան հարկաւոր և անհրաժեշտ բան է մեր քաղաքում, կարծում ենք բացատրութիւնների կարօտ չէ. Ղուբան ունի 4000 թուրք բնակիչ, իսկ հայ և հրէայ բնակիչների թիւը 1000-ի է հասնում։ Ունենք մի հատ քաղաքային բժիշկ, իսկ մնացածները բոլորը գաւառի համար են և շատ սակաւ է պատահում, որ նրանք շաբաթներով, գուցէ նոյն իսկ օրերով այստեղ մնային։ Հասկանալի է, որ մէկ բժիշկը ինքն ըստ ինքեան չէ կարող այցելել այդքան բնակիչ ունեցող քաղաքի հիւանդներին և շուտափոյթ օգնութիւն հասցնել նրանց, մինչդեռ հիւանդանոցը այդ կողմից մեծ յարմարութիւն ունի։

Կիրակի, ամսիս 20-ին, ռուս քահանայ Պօնօմարիեվի համար կլուբում մի ընթրիք տրվեց, որին ներկայ էին 10-ից աւելի հայ վաճառականներ ևս։ Պօնօմարիեվ փոխադրվում է Պերիչիբ նոյն պաշտօնով։ Նա մեր մէջ յայտնի էր, որպէս լաւ մարդ։

Երէկ նահանգական դատարանը այստեղ բացեց իր սեսիան, որ տեւելու է 4 ամիս։

Մ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Կ. Պոլսից մեզ գրում են. «Թիւրք կառավարութիւնը ամեն միջոց գործ կը դնէ շահելու անգլիական դեսպանի սիրտը, որ շատ որոշ դիրք բռնած է Սասնոյ դէպքերի պատճառաւ։ Նախարարական խորհուրդներ և տեսակցութիւններ իրար կը յաջորդեն։ Մեծ եպարքոսը երեք-չորս օր հիւանդ ձևացաւ և Բ. Դուռը չիջաւ։ Անգլիական կառավարութեան սիրտը շահած լինելու համար՝ սուլթանը պատրաստականութիւն յայտնեց նախարարական փոփոխութիւն ընել, և նոյն իսկ անգլիասէր Ռեամիլ փաշան մեծ եպարքոս նշանակել»։

—

Ինչպէս յայտնի է, պարսից շահը որոշել էր մի արտակարգ դեսպանութիւն ուղարկել Պետերբուրգ ցաւակցութիւն յայտնելու Պարսկաստանի կողմից ռուսաց թագաւոր Կայսր Նիկոլայ II-ին իր հանգուցեալ Ցնողի մահվան առիթով և շնորհաւորելու Նորին Մեծութեան գահակալութիւնը։ Այդպիսի պարագաներում ընդունված սովորութիւն է Պարսկաստանում՝ ուղարկել Շահի մօտիկ ազգականներից կամ գլխաւոր շահզադաներից մէկին, իբրև պատգամաւոր։ Նասրէդդին շահը այդ պաշտօնի համար ընտրել է իր հօրեղբօր Ամիրխան սարդար (սպարապետ) Շահզադէին, որը և իր բազմաթիւ սվիտայով մի քանի օր առաջ հասաւ Բագու և այդտեղից ուղևորվեց Պետերբուրգ Պետրօվսկի վրայով։ Մեծ եպարքոս Սադր-Ազամի առաջարկութեամբ և Շահի հրամանով, այդ արտակարգ դեսպանութիւնը Պարսկաստանի ներկայացուցիչ է հանդիսանալու Ֆրանսիայի Գիտութիւնների Ակադեմիայի հոբելեանական նիստերին։ Դեսպանը ուղևորվում է Ֆրանսիա Ռուսիայի միջոցով։

—

Ցիւրիխի մեծ պարծանքներից մէկն էլ նրա «Պեստալոցիանում» կոչված ժողովածուն է, ուր մեծ մանկավարժի երախտապարտ հայրենակիցները ի մի են ժողովել նրա ժամանակվայ, նրանից առաջ և յետոյ մանկավարժութեան վերաբերեալ վերին աստիճանի հետաքրքիր իրեր. բայց, դժբաղդաբար, մեր գնացած ժամանակը ժողովածուն փակ էր այցելուների առաջ, և թէև պրոֆէսօր Արելեանին ճանաչելով ներս թողին, մենք անյարմար համարեցինք երկար մնալ և տեսնել ամեն ինչ։ Այդտեղից դուրս գալով՝ գնացինք ցուցահանդէս։

Մեր այցելած ցուցահանդէսը կրում էր՝ «1894 թուի Ցիւրիխի կանտոնական, արհեստական ցուցահանդէս, միացած հանրապետական մասնաւոր ցուցահանդէսին, յունիսի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը»։ Ուրեմն ցուցահանդէսը միմիայն Շվէյցարիայի և յատկապէս Ցիւրիխի կանտոնի համար էր։

Ցուցահանդէսի ընդարձակ, վայտեայ, յատուկ այդ նպատակի համար պատրաստած շինութեան մէջ, որի մուտքը զարդարված էր պահապան վիթխարի առիւծներով և ազգային դրօշակներով, առանձին գլխաւոր բաժանմունքներում ի ցոյց էին դրված երկրի ամենաընտիր արդիւնաբերութիւնները։ Այդ արդիւնքների մասին պաշտօնական ցուցակից քաղում ենք հետևեալ տեղեկութիւնները։

«Ցիւրիխի կանտոնի տարածութիւնը 1720 քառակուսի կիլոմէտր է և այդքանից անմշակ է մնում միայն 120 քառ. կիլոմէտր՝ լճեր, գետեր, ճանապարհներ ներկայացնելով. 1888 թուին ունէր 337,183 բնակիչ, որ գնալով աճում է մի տասերորդ համեմատութեամբ։

«Երեսնական թուականից սկսած՝ բնակիչների մէջ մեծ փոփոխութիւն է տեղի ունեցել։ Կանտոնը ստացել է ազատ վարչական կազմակերպութիւն, ժողովրդային օրէնսդրութիւն և կառավարութիւն, որոնց շնորհիւ և պաշտպանութեամբ ժողովրդական ոյժերը աճել են ամենայն ուղղութեամբ։ Ժողովրդական ուսումնարանները ժողովրդի բոլոր խաւերի մէջ տարածել են կրթութիւն և բարեկեցութիւն, իսկ բարձրագոյն դըպրոցները՝ մասնագիտական կրթութիւն գիտական և արհեստաւոր դասակարգի մէջ. շինվել են բոլոր հովիտների մէջ հաղորդակցութեան գեղեցիկ ճանապարհներ, որոնց շնորհով միացան երկաթուղու մեծագործ ցանցերը, գործարաններ արագահոս ջրերի մօտ, հաղորդակցութեան դիւրութեան համար բանկեր։ Մի ստեղծագործութիւնից ծընունդ էր առնում միւսը։ Այդ բոլոր գործարանների գործակցութեամբ առաջ եկաւ ներկայ զըրութիւնը, որ ուղիղ թուերով այսպէս կարելի է բնաւորոշել։

«Կանտօնում գործում են 750 ջրաշարժ գործարաններ, 17,200 ձիու ոյժ ներկայացնելով. 860 շոգեշարժ մեքենաներ (460 հոգու սեփականութիւն) 30,100 ձիու ոյժով. պետութեան գործարանների թիւը հաւասար է 800-ի։ Ռոճիկ և մըշակների վարձ է տրվում տարեկան 20,000,000 ֆրանկ։

«Կանտօնը 1892 թուին դրամով նպաստել է 47,200 ֆր. վաճառականութեան և արհեստների համար, 196,700 ֆր. երկրագործութեան համար, 350,000 ֆր. կարկտից և ցրտից վնասվածներին. հասարակական դպրոցներին 3,000,000 ֆրանկ։

«Գետերի ընթացքը կանոնաւորելու համար ըսկսած 1877 թուից՝ 8,000,000 ֆր.։

«Նպաստ երկաթուղիներին 1872 թուից սկսած 12,000.000 ֆր. 1892 թուին հարկահանութեան է ենթարկվել 960.000,000 ֆր. կարողութիւն. հարկ ստացվել է թէ կարողութիւնից և թէ արհեստից 4,049,000 ֆր.։ Կանտօնի ընդհանուր ծախսը հաւասար է 12,000,000 ֆրանկի»։

Պաշտօնական տեղեկագրի արտայայտած վերջին պարզ, բայց գիտակցական խօսքերը արտայայտութիւն են մի հպարտ, իր արժէքը, ինքնապատուութիւնը հիմնովին հասկացող ազգասէրի և ամենամեծ գովասանքը այդ աշխատասէր, արդիւնաւէտ, ազատ, անկախ ժողովրդին։ Իսկ մեր ընթերցողը թող նեղութիւն կրէ քիչ երկար կանգ առնելու և մտածելու այդ պաշտօնական ճշմարտախօս և պերճախօս թուերի վրա՝ համեմատելով երկրի տարածութիւնը, բնակիչների թիւը և արտադրութեան չափը։

Այժմ դառնանք ցուցահանդէսին։ Ցուցահանդէսի մէջ կային արդիւնաբերութեան հետևեալ մասերի իրերը։ Հանքագործութիւն, աղիւսագործութիւն, բնակարանների շինութեան առարկաներ, որոնց հետ միացած էին շինութիւնները զարդարելու արուեստի արդիւնքները, կահկարասիք, տնային սարք, մեքենագործութիւն և հրշէջութեան վերաբերեալ իրեր, մետաղագործութիւն, հագուստներ, կերակրի և սննդի վերաբերեալ իրեր, քիմիական արդիւնաբերութիւն, ոսկերչութիւն, ժամագործութիւն, երաժշտական և գիտական գործիքներ, թղթագործութիւն, տպագրութիւն իր ճիւղերով, երկրագործութիւն և անտառապահութիւն, այգեգործութիւն, հիւրատներ, տնտեսութիւն, արհեստներին նպաստող կուրսեր, արհեստանոցներ, ընկերութիւններ և գրականութիւն։ Ի ցոյց դրված իրերից ստացած ընդհանուր տպաւորութիւնն այն է, որ արդիւնաբերողը ամենայն կերպ ձգտում է միացնել իր արտադրութեան մէջ նուրբ գեղարուեստական ճաշակ, կեանքի գործածութեան համար ամենամեծ յարմարութիւն և գների մէջ չափաւորութիւն. ազատ մրցումը ստիպում է արդիւնաբերողներին այդ յատկութիւններով մրցմանը դիմանալ, կամ աւելի յաջողիլ։

Գլխաւոր մուտքով ներս մտնելիս՝ այցելուն իր աչքի առաջ տեսնելով մեծ ապակեայ պահարաններ՝ լի իւրաքանչիւր հասակի, սեռի, դասակարգի ճաշակով պատրաստած հագուստներով, կախարդված մտածում է երկար կանգ առնել և դիտել մարդկային ձեռքի կամ նրա հնարած մեքենայի նուրբ մասունքները, տարազի, կտրուածքների ֆանտաստիկական խաղերը, բայց հեռուից լըսվող մեքենաների աղմուկը երկար ժամանակ չեն տալիս. առաջ էք անցնում և սքանչանում մի հիանալի տեսարանով՝—բազմաթիւ մեքենաներ երկար պավիլիոնի մէջ քովէքով շարված, էլէքտրական ոյժով միասին սկսում են գործել՝ ամենատարբեր արդիւնքներ առաջ բերելով։ Մի քանի մեքենաների առաջ կանգնած աշխատաւոր կանայք և մարդիկ մետաքսեայ ամենաընտիր գործուածներ էին պատրաստում. միւսները նրանց համար թելեր ոլորում. ուրիշ մեքենաներով հացահատիկներ են աղում, մաղում, հունցում, թըխում. երրորդներով շոկոլադ են պատրաստում և ներկայ եղողներին թարմ ծախում. չորրորդների մօտով անցնելիս զգում էք, որ ձեր երեսին տաք կամ սառը քամի զարկեց. դրանք օդ տաքացնող կամ մաքրող մեքենաներ են. հինգերորդով գրքեր, պատկերներ են տպում. վեցերորդով ծանրութիւններ բարձրացնում, տախտակներ սղոցում,

տակարգ դեսպանութեան ընկերանում է, իբրև թարգման և քարտուղար, երիտասարդ Յովհաննէս խան Մասեհեան։ Այդ այն Մասեհեանն է, որի թարգմանութեամբ նորերս լոյս տեսաւ «Համլէտը»։ Ամիր-խան սարդարը իր հետ տանում է շատ թանկագին ընծաներ.— գոհարեղէն, գորգեր, շալեր՝ մատուցանելու թագաւոր կայսրին և թագուհի կայսրուհուն՝ Շահի կողմից։

—

Նոյեմբերի 27-ին Աբասթումանից Թիֆլիս վերադարձաւ Թիֆլիսի նահանգապետ իշխան Շերվաշիձէ։

—

Երկու օր առաջ Թէհրանից Թիֆլիս եկաւ Թաւրիզի նախկին ֆրանսիական ընդհանուր հիւպատոս Էմիլ Բէրնէ, որ այժմ գնում է Պարիզ և շուտով պիտի վերադառնայ Պարսկաստան աւելի մեծ պաշտօնով։ Ամբողջ 20 տարի վարելով զանազան պաշտօններ Պարսկաստանում՝ իբրև ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչ և գըլխաւորապէս Ատրպատականում իբրև ընդհանուր հիւպատոս, Էմիլ Բէրնէն շատ մօտ կերպով ծանօթ է հայոց գործերին և միշտ պաշտպանել է հայերին պարսիկների ճնշումների դէմ։

—

Մեզ գրում են Էջմիածնից, որ արդէն բաւական ժամանակ է, որ ծերունի Սմբատ արքեպիսկոպոս Սմբատեան առաջարկված է տեղակալի պաշտօնի համար, կառավարութեան հաստատութեան, և նրա հետ էլ, իբրև կանդիդատ, Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան։ «Օրէցօր, աւելացնում է մեր թղթակիցը, սպասում են այդ հաստատութեանը»։

—

«Տարազ» շաբաթաթերթի մէջ կարդում ենք. «Թիֆլիսի նահանգի ազնուականութիւնը մի յանձնաժողով էր ընտրել, որ նա մշակէ և զեկուցանէ ազնուականների ընդհանուր ժողովին, թէ ինչ կերպ ծախեն եղբ. Արծրունիների միլիոնի արժէք ունեցող քարավանսարան, որ մնացել էր լիշեալ բանկի վրա, որպէս գի Թիֆլիսի ազնուականութիւնը իր վրա հաստատել կարողանայ։ Պատճառը այն է, որ ֆինանսների մինիստրը չէ թոյլատրել այդ կալուածքը բանկի վրա հաստատելու։ Այժմ, որ ազնուականների պարագլուխը վերադարձել է Պետերբուրգից, ծրագիրը յանձնաժողովը վերջացրել է և այդ առիթով արտաքոյ կարգի ընդհանուր ժողով լինելու է առաջիկայ դեկտեմբերին։ Պատեհ առիթ ենք համարում հաղորդել, որ հայ դրամատէրերից էլ մի քանի ընկերութիւն է կազմվում այդ քարավանսարան գնելու համար։ Լսում ենք, որ մտադրութիւն կայ հրաւիրել պրոֆէսոր Անդրէաս Արծրունուն, որ նա ևս մասնակցէ այդ կազմվող ընկերութիւններից մէկին։ Օրէնքով, եթէ այդ կալուածքը վաճառվի աւելի մեծ գնով, բանկը, իր հասնելիքը առնելուց յետոյ, մնացածը պարտաւոր է վերադարձնել եղբ. Արծրունիներին։ Հաստատ գիտենք, որ համարեա թէ կազմված է 3—4 դարաբաղցի կապիտալիստներից նոյնպէս մի ուրիշ ընկերութիւն, որը անպատճառ մասնակցելու է այդ աճուրդին»։

—

Ներքին գործերի մինիստրութիւնը կազմել է մի նախագիծ, մ ս ա վ ա ճ ա ռ ո ւ թ ե ա ն գործը կանոնաւորելու համար։

—

Երեքշաբթի, նոյեմբերի 29-ին, կայսերական կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում, Ա. Կլաուսէն կարդաց մի զեկուցում Պետերբուրգում կայացած միջազգային մրգահանդէսի մասին։ Այդ մրգահանդէսում Կովկասի և հարաւային Ռուսաստանի մասը շատ թոյլ էր, իսկ հիւսիսային Ռուսաստանի և մանաւանդ արտասահմանեան բաժինները հարուստ։ Կլաուսէնի ասելով, երևանեան մրգերը շատ լաւ էին պահպանված մինչև ցուցահանդէսի վերջը և լաւ տեսակներից էին։ Մինչդեռ Թիֆլիսի նահանգի մրգերը փչացել էին և ստոր յատկութիւն ունէին։ Զեկուցանողը բերել էր հետը ցուցահանդէսից մի քանի մրգեր, որոնք դեռ լաւ պահպանվել էին, ցոյց տալեց մրգ փաթաթելու այն ձևերը, որ նա տեսել է ցուցահանդէսում և մի քանի գործիքներ, որոնք գործ են ածվում մրգապահութեան համար։

—

Թիֆլիսի առաջնորդ Գէորգ եպիսկոպոս Սուրէնեան նոյեմբերի 29-ին Պետերբուրգից Թիֆլիս վերադարձաւ և արդէն ստանձնեց իր պաշտօնը։

—

Այսօր, հինգշաբթի, դեկտեմբերի 1-ին, կալուածական բանկի թատրոնում, հայոց մի քանի դերասանները և դերասանուհիները տալու են մի հայերէն ներկայացում։ Պէտք է խաղացվի վրացերէնից թարգմանած «Խանում» կոմէդիան և «Օրթաճալու քէֆը» հին վօդըվիլը։ Խաղին մասնակցելու են տ. տ. Զաբէլ, փառանձեմ, օր. Վարդուհի, պ.պ. Միրաղեան, Արուքեան, Վրոյր, Սարգարեան, Ցարութիւնեան և ուրիշները։

—

Ֆինանսների մինիստրութեան քննութեանն է ներկայացրած չքաւոր արհեստաւորներին կրէդիտ տալու կանոնադրութեան նախագիծը, որ մշակել է արհեստաւորների աշխատանքը խրախուսող Մոսկվայի ընկերութիւնը։

—

Պաշտօնապէս յայտարարված է «Правит. Вѣст.» լրագրում, որ գրաքննական կանոնադրութեան 121 րդ յօդուածի հիման վրա, վերջնականապէս դադարեցրած է Թիֆլիսում հրատարակվող «Анонсъ» ռուսերէն լրագիրը»։

—

ՐՕՍՏՕՎԻՑ մեզ գրում են. «Տարիներից ի վեր, գլխաւորապէս Պարսկաստանի և Անդրկովկասի զանազան անկիւններից շարունակ գաղթել են այստեղ բազմաթիւ հայեր, և այսօր մի մեծ կօլօնիա են ներկայացնում։ Դրանց կեանքի մէջ ոչ մի մխիթարական երևոյթ մինչև այժմ երևան չէ եկել, բացի այն, որ միմեանց դէմ ատելութեամբ լցված, շարունակ որոգայթներ են լարեր իրար դէմ։ Այն օրից, երբ դրանք թողել են իրանց հայրենիքը, այդ օրից մի տեսակ չինական պարիսպ է կանգնել նրանց և իրանց հայրենակիցների մէջ. աւելորդ են համարել նրանց ցաւին ցաւակից և ուրախութեանը ուրախակից լինել։ Խորասուզված առևտրական գործերի մէջ, ժամանակ չեն գտել նայելու իրանց շուրջը պատահող երևոյթների վրա։ Ոչ մի հասարակական կամ ազգային հարց արձագանք չէ գտել դրանց մէջ, և միշտ ցոյց են տուել անտարբերութիւն և արհամարհանք։ Օրինակ, այս վերջին ժամանակներս առաջ եկան մի շարք հասարակական հարցեր, ինչպէս, օրինակ, Երևանի և Կարսի սովը, գաղթականներին օգնելու հարցը, բայց դրանցից ոչ մէկն էլ արձագանք չը գտաւ այստեղի հայ հասարակութեան մէջ։ Ժամանակ չէ միթէ այստեղի հայ կօլօնիային մի փոքր աւելի պարտաճանաչ լինելու»։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Կարդալով «Մշակի» 135-րդ համարում «փողոցային տեսարաններ» վերնագրով յօդուածը, մենք ակամայ յիշեցինք և Երևանի մասին, ուր տեղի են ունենում նոյն փողոցային անախորժ տեսարանները։ Ահա ձեզ մի խանութ, որի մօտ խմբվելով մի քանի պարոններ, իրանց ժամերը անց են կացնում անմանավայել հայհոյանքներով. մի այլ տեղ, անց ու դարձ անողների հասցէին անում են ամենատգեղ ակնարկներ. ահա ձեզ մի ուրիշ տեղ՝ նոյն տեսարանը։ Եւ այդպիսով այստեղ փողոցներում տեղի են ունենում նոյն տեսարանները, ինչ որ Թիֆլիսում։ Ցաճախ կը հանդիպէք աշակերտների, որոնք իրանց թոյլ են տալիս անել այն, ինչ որ միայն յատուկ է փողոցային շրջմոլիկներին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆԸ

—

Պրոֆէսոր Վամբերի, որը թիւրքասէր և արևելեան գործերին հմուտ մի մարդ է համարվում, «Pester Lloid» լրագրում մի յօդուած տպեց, որի մէջ ապացուցանում է, որ Անգլիայի և Ռուսաստանի մէջ համաձայնութիւն, բառիս բուն նշանակութեամբ, կայանալ չէ կարող, որովհետև դրա համար ոչինչ փաստեր չը կան։ Երկու պետութիւնների աւանդական քաղաքականութիւնը հակառակ է դրան։

Անգլիան և Ռուսաստանը այդ կողմից նման են ջրին և կրակին, որոնք միշտ հակառակորդ կը մնան և երբէք խաղաղ չեն ապրի Ասիայում, ուր նրանց շահերը ուղղակի միմեանց հակառակ են։ Մի հաստատ համաձայնութեան հասնելու միակ միջոցը այն է, եթէ Անգլիան կը համաձայնվի կատարեալ ազատութիւն տալ Ռուսաստանին իրագործելու Ասիայում իր զարգացման սիստէմը։ Սակայն Անգլիան չէ կարող այդ անել, և այդ պատճառով ամենևին յոյսեր չը կան բարեկամանալու Ռուսաստանի հետ։

ՄԱԿԵԴՈՆԻԱՅԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Սօֆիայում այս օրերս տեղի ունեցած միտինգում վճռված է մի յատուկ պատգամաւորութիւն կազմել նախկին մինիստր Պօմանովի առաջնորդութեամբ և լիազօրութիւն տալ այդ պատգամաւորութեանը, որ նա միջնորդի Բերլինի դաշնագիրը ստորագրող պետութիւնների մօտ, որպէս գի ինքնավարութիւն տրվի Մակեդօնիային և առհասարակ իրագործվեն Բերլինի դաշնագրի որոշումները։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պօլիս, նոյեմբերի 14-ին

Օրվայ հարցերը մնացել տուին ընտրական ժողովը։ Դիմաքսեանը 3 օր հիւանդութեան պատրուակաւ պատրիարքարան չեկաւ, բայց ուրբաթ նորէն եկաւ և սկսեց առանց պատրիարք ըլլալու պատրիարքութիւն ընել։ Դիմաքսեանի տեղապահ հաստատուելէն մինչև այժմ ուղիղ 3 ամիս անցաւ, բայց տակաւին պատրիարք չընտրուեցաւ։

Դիմաքսեանին կը մնար հրաժարուիլ բոլորովին ոչ թէ այժմ, այլ ասկէ ամիս մը առաջ, երբ տեսաւ որ անկարող է իր պարտք կատարել և

ջուր մաքրում, երկաթ ծեծում և այլն և այլն, և այդ բոլորին կեանք, շարժողութիւն տուողը ըստորերկրեայ շինութեան մէջ ծածկված վիթխարի մեքենաներն են, որոնք գոլորշու ուժով շարժվելով՝ արտադրում են աւելի մեծ, աւելի հեշտ բանեցնելու ուժ, էլեկտրական ուժ։ Անկասկած ցուցահանդէսի ամենահետաքրքիր մասն էր այդ, ուր այցելուն անձամբ, չօշափելի կերպով տեսնում էր, թէ ինչ ձևով են պատրաստվում այն հազարաւոր իրերը, որ նա շարունակ գործ է ածում իր առօրեայ կեանքի մէջ։

Նոյն այդ պավիլիօնի երկրորդ յարկը շրջապատող բալկօնի վրա, որտեղից արժէ դիտել մեքենաների գործողութիւնը, շարված են կանանց աշխատանքներ, ընտիր ասեղնագործ գործեր, ասեղնագործ աղլուխներ, կանանց, երեխաների զարդեր, գուլպաներ, արհեստական ծաղիկներ, ծղոտեայ գլխարկներ և այլն, որոնց մեծ մասը գիւղացիների ձեռքի արդիւնք են՝ սովորական պարապմունքներից ազատ ժամերին արտադրած։

Մեքենաների մասից մտնում էի ամենաընդարձակը՝ կահկարասիքների բաժինը. դա ցուցահանդէսի մեծ զարդն է կազմում. իւրաքանչիւր ցոյց դնող, իր կահկարասիքը աւելի գրաւիչ կացուցանելու համար, նրանցով մի ամբողջ սենեակ է զարդարել, կամ դահլիճ, կամ ննջարան, այնպէս որ տեսնողը ակամայից բացականչում է. երանի թէ՝ այսպէս գեղեցիկ ընդունարան կամ պարապելու սենեակ ունենայի։ Այդ ընդարձակ մասի կենտրոնում ի ցոյց են դրված լուսանկար, լուսատիպ, ցինկօտիպ, լիտօգրաֆիական ընտիր պատկերներ, ընտիր տպագրած գրքեր, անհման կազմեր և այլն, փարթամ, այլաբանական նկարներով կամ պարսկական և արաբական ճաշակով աղիւսներից պատրաստած վառարաններ, փոքրիկ մարմարեայ արձաններ, միջին դարու պատկերներով նկարած ապակիներ, դաշնամուրներ, էլեկտրական լապտերներ և այլն, սովորեցնում են մի հարստի, թէ ինչով կարող է վայելչապէս զարդարել իր բնակարանը։

Շարունակելով շրջագայութիւնը, այցելուն մտնում է խոհանոցի, գինետան, գարեջրատան, գոմի, գիւղատնտեսութեան վերաբերեալ մասերը, որտեղ նա կը տեսնի, թէ ինքան քիչ վառելիքով, քիչ աշխատաւոր ձեռքով կարող է մեծ վառարաններ բանեցնել և հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ կերակրել. թէ ինչ տեսակ անօթներով յարմար և հեշտ կերպով կարելի է այս կամ այն կերակուրը պատրաստել։

Հարիւրաւոր մեծ և փոքր, կաղնի փայտից շինած տակառները պարզ ցոյց են տալիս, թէ խմելիքների արդիւնաբերութիւնը ինչքան առաջ է գնացած։ Մի վիթխարի տակառ պատրաստած է տասներկու հազար լիտր հեղուկի համար. մի ուրիշը՝ քսանուչորս հազար ութ հարիւր լիտրի համար։

Գիւղատնտեսութեան մէջ Շվէցարիան միշտ առաջինն է եղել և բնական էր, որ այդ ճիւղի վերաբերեալ արդիւնքների, հին և նոր մեքենաների մէջ մեծ բազմատեսակութիւն կար։ Հետաքրքիր էին մանաւանդ անտառապահութեան և մեղրաբուծութեան վերաբերեալ իրերը։ Ապակեայ փեթակների մէջ մեղուները, մի փոքր անցք ունենալով ազատ օդ դուրս գալու համար, հանդիսատեսների աչքի առաջ շարունակում էին իրանց անխոնջ աշխատանքը։

Աւելորդ ենք համարում երկար կանգ առնելու պատերից քաշարած ընտիր, մանրամասն երկրաբանական քարտէզների, հարիւրաւոր շինութիւնների պլանների, երեխայական խաղալիքների, ուսանելու առարկաների, բժշկական գործիքների, հիւանդներին խնամելու, վէրքեր կապելու միջոցների, գեղեցիկ կառքերի, կաշեայ, բըրդեայ, թղթեայ անօթների, զարդերի, հագուստների, և այլն և այլն վրա, որոնցից ամեն մէկը առանձին վերցրած՝ խիստ ուշադրութեան արժանի է, բայց ամբողջութեան մէջ կորցնում է իր նշանակութիւնը, ինչպէս անհատ հասարակութեան մէջ։

Պաշտօնական ցուցակի մէջ մի առ մի թւած է, թէ արհեստագործութեան ինչ ճիւղը ինչ առաջադիմութիւն է արել, ինչ տեսակ ապրանքներ իրանց առաւելութիւնով շարունակում են գրաւել արտասահմանի վաճառանոցը, և դրա հակառակ՝ ինչ տեսակ արդիւնքների մէջ երկիրը կարիք է զգում արտասահմանին դիմելու։ Այնպէս որ մէկը կարդալով այդ ցուցակը, որի մանրամասնութիւնները մեզ հեռուն կը տանէր, կատարեալ գաղափար կը կազմի այդ փոքրիկ, իր քաղաքական կազմակերպութեամբ այնքան համակրելի երկրի տնտեսական, արդիւնաբերական կատարած հսկայական քայլերի մասին։ Իսկ թէ ինչի մէջ է կայանում այդ առաջադիմութեան գաղտնիքը, դրան պատասխանում է ցուցակը։

«Մի ժողովրդի գիտնական կեանքը արդիւնք է մի շարք գործօնների։ Նրանց մէջ առաջին տեղը բռնում է կանտօնական բարձրագոյն վարժութիւնը, որ ճշմարիտ հասկացողութիւն ունենալով իրերի մասին, գործում է, երբ հարկաւոր է արգելքները հեռացնել և խրախուսել։ Ըստ այդ պահանջի՝ Ցիւրիխի կանտօնը լաւ վիճակի մէջ է։ Կանտօնում ապրում է խնտելիգենտ, շարժուն, առաջ ձգտող ժողովուրդ, որի մէջ կան մի շարք օրվայ հարցերը քննող ընկերութիւններ։ Այդ ընկերութիւններից յիշելու արժանի են. Ցիւրիխի վաճառականական ընկերութիւնը, ցիւրիխեան ապրէշումի արհեստագործութեան ընկերութիւնը, կանտօնական արհեստագործութեան ժողով, կանտօնական գիւղատնտեսական ժողով. ապա յիշելու արժանի են ընդհանուր շվէյցարական հանրապետութեան համար՝ շվէյցարական վաճառականական և արհեստագործական ժողովը, շվէյցարական արհեստագործութեան ժողով, մանողների և գործողների ժողով, և շվէյցարական մեքենագործութեան ժողով։ Ժողովները, բացի բազմաթիւ հարցեր լուծելուց, ձգտել են արհեստագիտական թանգարաններ և մանաւանդ ուսումնարաններ հիմնել։ Ջեռագործական և արհեստագործական ուսումնարանների թիւը շատ շատացել է, 113-ի հասնելով։ Բացի այդ, գլխաւորապէս երկրագործութեան են ծառայում կենդանաբուժական ուսումնարանը, երկրագործական ուսումնարանը Շտրիկհօֆում և հարաւային Շվէյցարիայում՝ գինու, պտուղների և այգեգործութեան ուսումնարանը։»

Այս վկայութեանը ոչ մի մեկնութիւն կարծում ենք հարկաւոր չէ։ Ցուցահանդէսը այն աստիճան գրաւեց ինձ, որ Ցիւրիխում այլ ևս ժամանակ չունեցայ ուրիշ բան տեսնելու, իսկ երկար մնալ չէի կարող, որովհետև մի օրից յետոյ Ժընէվում բացվում էր արևելագէտների ժողովը, ուստի հրաժեշտ տալով պրոֆէսոր Աբէլեանի ընտանիքին և իրան ջերմ շնորհակալութիւն յայտնելով, նոյն գիշերը ճանապարհվեցի դէպի Ժընէվ։

Պարիզ. Մեսրոպ վարդապետ

խնճուած խնդիրներ կարգի դնել։ Դիմաքսեան նոյն իսկ այժմ, այս ճգնաժամու մէջ ևս, չուզեց հրաժարիլ և անխղճաբար կը շարունակէ տեղապահութիւնը։

Մեծ վախ կը տիրէ, որ Դիմաքսեան և այս պարագային չը հրաժարի և կառավարութեան համակերպի։ Դիմաքսեան շատ լաւ գիտէ, որ ինքը չի կրնար ազգի համար թարգման ըլլալ և օրաւուր ատելի եղաւ ազգին, և իրեն կը մնայ հետևել յունաց պատրիարքին և հրաժարիլ։

Յունաց պատրիարքը կարդալով և լսելով, որ իր ազգը դժգոհ է իրմէն և իր հրաժարականը կը փափաքին, իր հիւանդութիւնը պատրուակելով անդառնալի կերպով իր հրաժարականը տուաւ կառավարութեան և բոլորովին քաշուեցաւ գործերէն։ Կառավարութիւնը քանի մը անօգուտ փորձերէն՝ համոզել Նէօֆիթոս պատրիարքը ետ առնել հրաժարականը, հարկադրեալ ընդունեց և տեղապահը հաստատելով, պատրիարքական ընտրութեան հրաման տուաւ, որ ըստ կանոնագրի, մինչև 40 օր, պատրիարքի ընտրութիւնը կատարուի։

Հայ կղերը բարոյապէս այնքան անկեալ, ողորմելի վիճակի մէջ է, որ նոյն իսկ յոյներէն օրինակ առնելու անընդունակ է և այդ չնչին արիութենէ ալ զուրկ է։

Թ—րով

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Պարսկաստանի Էնզէլի քաղաքից մեզ գրում են. «Այստեղ հրդեհ պատահեց, և ահագին վնաս տուեց։ Այրված է մինչև 100 խանութ։ Վնասվողները գլխաւորապէս պարսիկներն են»։

—Բերլինից հեռագրում են նոյեմբերի 23-ին (դեկտեմբերի 5-ին) հետևեալը։ «Այսօր տեղի ունեցաւ ռեյխստագի նոր կառուցված շինութեան վերջին քար դնելու հանդէսը։ Հանդէսը կատարվեց կայսրի, կայսրուհու և ուրիշ բարձրաստիճան անձանց ներկայութեամբ։»

—Իտալական «Tribunal» լրագիրը յայտնում է մի առաջնորդող յօդուածում, որ եթէ տեղի կունենայ Անգլիայի և Ռուսաստանի բարեկամութիւնը, այն ժամանակ երեքպետեան դաշնակցութեան գոյութիւնը անպէտք կը դառնայ։ Իտալիան, ի հարկէ, շատ չի ցաւի այդ բանի մասին։ Լրագրի կարծիքով, եւրոպական պետութիւնների նոր խմբումը կատարելապէս կախված կը լինի Ֆրանսիայից։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 Նոյեմբերի։ Այսօր Պետրոպավլովսկ տաճարում հոգեհանդիստ կատարվեց կայսր Ալէքսանդր III-ի համար, ներկայութեամբ Նոցա Կայսերական Մեծութիւնների, կայսերական Ընտանիքի անդամների, Ռուսիայի իշխանուհու, պետական խորհրդի անդամների, մինիստրների, սենատորների, Պալատի անդամների, Նորին Մեծութեան սվիտայի և գեներալների։

ԼՈՆԴՈՆ, 28 Նոյեմբերի։ Ալինագօրայում երէկ հաւատարմութեան երդում տուեցին Նիկոլայ կայսրին մօտ 400 ռուս հրէաներ ռուսաց ընդհանուր հիւպատոսի և լորդ Բոտշիլդի ներկայացուցչի ներկայութեամբ։ Գլխաւոր բաբին խրատում էր ռուս հրէաներին չնորհակալ լինել իրանց թագաւորից՝ հրէաների դրութիւնը թեթևացնելու համար Ռուսաստանում։

ԵՕԿՕՀԱՄԱ, 28 Նոյեմբերի։ Եապօնական երկրորդ զօրաբաժինը շուտով կարշաւի Պէկինի վրա։

ԲԵՐԼԻՆ, 28 Նոյեմբերի։ Կայսերական կանցլերը այսօր ուղարկեց ռեյխստագի նախագահին Բերլինի պրօկուրօրային իշխանութեան առաջարկութիւնը, որպէս զի ռեյխստագը թոյլ տայ քրէական դատ սկսել սոցիալիստ պատգամաւորների դէմ, որոնք դեկտեմբերի 6-ի նիստում տեղերից չը վերկացան ի պատիւ կայսրի «hoch» աղաղակելու ժամանակ։ Սոցիալիստներին, երևի, կը մեղադրեն մեծութիւնը վիրաւորելու մէջ։

ՎԻԷՆՆԱ, 29 Նոյեմբերի։ Կայսրը հաստատեց եկեղեցական-քաղաքական օրէնքները Ունգարիայի համար, որոնցով մտցնվում է քաղաքացիական ամուսնութիւնը, ժամասացութեան ազատութիւնը և դաւանութիւնների հաւասարութիւն։

ՎԱՇԻՆԳՏՕՆ, 29 Նոյեմբերի։ Նոյեմբեր ամսի համար երկրագործական բիւրօի կազմած հաշուից երևում էր, որ մի չէֆֆել (չափ) ցորենի գինը 49,8 է. դա ամենաստոր գինն է վերջին 25 տարում։ Բամբակի փունջը արժէ 4,9. այդ գնից ցածր չը կայ։ Աշնանացան ցորենի միջին դրութիւնը 89% է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ

Նոյեմբերի 29-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ . .	92 ր.	25 կ.
Բերլին վրա 100 մարկ — . .	45 ր.	20 »
Պարիզի վրա 100 ֆրանկ — . .	36 »	62 »
Ոսկի — — արժէ . .	7 »	39 »
Մաքսային կուպօններ — . .	147 »	75 »
Արծաթ — — — . .	— »	— »
Բօրսային դիսկօնտ — . .	— »	— »
Պետ. բանկի 5% տոմս 1 շրջանի .	— »	— »
— — — — 2-րդ .	— »	— »
— — — — 3-րդ . .	— »	— »
4% պետական բէնտա.	94 7/8 »	— »
5% ոսկեայ բէնտա 1884 թ. . . .	159 »	— »
4 1/2 ոսկեայ փոխառութիւն. . . .	— »	— »
Արևելեան 5 1/2% փոխառ. 1-ին շրջ.	— »	— »
— — — 2-րդ —	— »	— »
— — — 3-րդ —	— »	— »
— — — 4-րդ —	— »	— »
Ներքին 5% առաջին փոխառութ.	245 »	25 »
— — երկրորդ —	220 »	50 »
Պետական երկաթուղային բէնտա.	101 »	50 »
4 1/2 բէնտա	— »	— »
4% ներքին փոխառութեան . . .	96 »	— »
5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի	— »	— »
Ազն. կալ. Պետ. բանկի խաղարկութ.		
Գրաւ. թղթ. — — .	189 »	25 »
4 1/2% վկայակ. գիւղ. հող. բանկի.	101 »	25 »
4 1/2% գրաւական թղթեր կալուած.	— »	— »
փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ.	151 »	— »
— — — թղթադ. .	— »	— »
Պետերբուրգի քաղաքային կրեդիտ.		
ընկերութեան օբլիգացիաները.	101 »	25 »
Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ.	100 »	75 »
Օդէսայի — —	100 »	25 »
Թիֆլիսի — —	99 1/8 »	— »
Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի.	99 »	50 »
— — Քուվայիսի — .	99 »	— »

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՑԱՑՏՆՈՒՄ Է

—

ԱՄԵՐԻԿԱ, Ուսթը, Կ. Սանթոյեան. Ձեր ուղարկած չեկը բանկը չէ ընդունում, ուստի և «Մշակը» ձեզ չի ուղարկվի։ Համաձայն ձեր վերջին նամակի «Մշակի» համարները կուղարկվեն ձեր տուած հասցէով դեկտեմբերի 1-ից մինչև 1895 թ-ի դեկտեմբերը։ Վճարի մասին կարգադրութիւն արէք։

Ի զէպ. խնդրում ենք այն անձանց, որոնք բաժանորդ են գրվում Ամերիկայից, ուղարկեն մեզ անգլիական կամ ֆրանսիական փող։ Միւս փողերը կամ դանազան չեկերը այստեղի բանկերում կամ չեն ընդունում, կամ շատ դժուարութեամբ են ընդունում։

ՕԴԷՍԱ. Գ. Եր. Շարունակեցէք ուղարկել։

ԹԱԻՐԻԶ, Մար. Պարսից կեանքը մոռացութեան մի տուէք. գրելու շատ նիւթ է մատակարարում այդ կեանքը։

ԷՋՄԻԱԾԻՆ. Ց. Վ. Ս. Ձեր պատասխանը կը տպագրվի։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12ժ. վիրաբուժութեան, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։

Դ. Գ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Կ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի և սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7 1/2 ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7 1/2 ականջի, կոկորդի, քթի և նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմիական և խոշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) դ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Վաղը, այսինքն դեկտեմբերի 2-ին, ցերեկվայ 2 ժամին, ԳԻՇԵՐԱՑԻՆ ԱՊԱՍՏԱՐԱՆՈՒՄ, որ գտնվում է Օլգինսկայա փողոցի վրա, Մանկաբարձական ինստիտուտի եռևը, Պետական Կալուածների Վարչութեան տան մէջ, կը կատարվի մաղթանք և այդ օրից Ապաստանը բացվում է անօթևանների համար։ 1—1

ՆՈՐ ՀՆԱՐՎԱԾ
ՊԱՏՐՈՅԳՆԵՐ

Ծծված առանձին բաղադրութեամբ, որ հնարել եմ ես, Գաջիևս, զարմանալի մաքուր և պայծառ բոց են տալիս, այրվում են առանց որ և է մուրի, հոտի և խանձահոտի, կէրոսինի մեծ խնայողութեամբ։ Հաւանութիւն են գտել Թիֆլիսի Քաղաքային Վարչութեան և նրա քիմիական լաբօրատօրիայի կողմից։ Այժմ այդ պատրոյգները շատ են տարածված և գործ են ածվում շատ հիմնարկութիւններում։ Ի միջի այլոց այրվում են դումայում և վարչութեան մէջ և գեղեցիկ հետևանքներ տուեցին։ Գինը մատչելի է։ Մագազինը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, № 30. կան ՅՐՎԻՋՆԵՐ, որոնք հասարակութեան պահանջմամբ կը տանեն պատրոյգները տուն և այնտեղ էլ կը սարքեն լամպաները։ 1—1

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԲՐՕԿԱՐԵԻ ԸՆԿ.
Հնարողներ
„ԾԱՂԿԵԱՑ Օ-ԴԸ-ԿՕԼՕՆԻ“
Զանազան գոյնի
Նորութիւն! տուալէտի ջուր
„Օ-ԴԸ-ԲՐՕԿԱՐ“
Զգոյշ պէտք է լինել կեղծումներից
(ամ. 30 № 67)
8—10

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
ԷՎԷԼԻՆԱ
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԷՏԻԴ
ՌՈՒՍԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ա. ԴԱՍՏԱԿԵԱՆԻ
Հրատարակութիւն „Արօր“ տպարանի
ԳԻՆԸ 70 ԿՈՊ.
Ծախվում է Թիֆլիսում, Տէր-Սարգսեանի խանութում, Եփրեմ Ծատուրեանի լամպաների մագազինում և Խիդղեկելի գրավաճառանոցում։ (№ 137) 3—6

ՀԵՌԱԽՕՍ № 104 ՀԵՌԱԽՕՍ № 104
Մ. Բ. ՍԱՓԱՐԵԱՆԻ
ԾԽԱԽՕՏԻ ԳՈՐԾԱՐԱՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ
որը, բացի բազմաթիւ բարձր շքանշանների, արժանացած է նաև ներկայ 1894 թ-ին ՈՍԿԷ ՄԵԴԱԼԻ—Անտվերպէնի, և ԲԱՐՁՐ ՊԱՏԻԱՒՈՐ ՊԱՐԳԵՒՆԵՐԻ—Լիոնի ցուցահանդէսներում
ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ՆՈՐ ՊԱՏՐԱՍՏԱԾ
ԸՆՏԻՐ ՊԱՊԻՐՕՍՆԵՐ
„Капризъ“. . . . . 25 հատը 15 կոպ.
„Рекомендаціонныя“ . . . . .
„Театральныя“. . . . . } 10 հատը 5 կոպ.
„Флора“. . . . . .
„Экономныя“ . . . . . 10 հատը 3 կոպ.
կարելի է առնել գործարանից և իսկական ծխախոտավաճառների մօտ։
Ուղարկելու ծախսը գործարանի վրա է։ (№ 104) 0—25



Ա. ԿՕՊՊԻ
ՖՕՐՏԷՊԻԱՆՆԵՐԻ
ԽԱՆՈՒԹՈՒՄ
(Միքայէլեան փողոց, № 132)
կան մեծ քանակութեամբ նոր դաշնամուրներ, 350 ռուբլուց մինչև 450 ռուբլի արժողութեամբ։
(№ 119) 14—25

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА
HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նօմէրներ, որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նօմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-զրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ ռէստօրան, տելեֆօն, քաղցրեղէնների խանութ, լրագիրներ։
Հիւրանոցի մէջ գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 112—130 (2.)